

AMERIABANK		«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ		10RB PL 72-03-02		
ԲԻԶՆԵՍԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ				Խմբագրություն 29		
				Ուժի մեջ է 01/08/2018 թ.		
7. Մաքսային քարտով մանրածախ բիզնես վարկային գծեր (Arca classic)						
	Վարկատեսակ	Մաքսային քարտով մանրածախ բիզնես վարկային գծեր (Arca classic)				
	Նպատակ	Մաքսային վճարումներ				
	Հաճախորդներ	Առնվազն 6 ամիս գործունեություն ծավալած իրավաբանական անձինք/անհատ ձեռնարկատերեր				
	Տնտեսության ոլորտներ կամ գործունեություն, որոնց վարկեր չեն տրամադրվում	1. Այնպիսի ապրանքների արտադրություն, առևտուր կամ գործունեություն, որոնք արգելված են երկրի օրենքներով կամ միջազգային պայմանագրերով 2. Արտադրություն կամ առևտուր, որոնք կապված են զինամթերքի հետ 3. Խաղատներ և այլ շահումով խաղեր 4. Թանկարժեք քարերի առևտուր 5. Փոխանակման կետ 6. Բրոքերային և բուքմեյքերական ընկերություններ 7. Արտադրություն, օգտագործում կամ առևտուր վտանգավոր նյութերով, ինչպիսիք են ռադիոակտիվ նյութերը և այլն, բացառությամբ գյուղատնտեսության մեջ օգտագործվող թունաքիմիկատների և պարարտանյութերի:				
Վարկի պայմաններ	Արժույթ	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար	Եվրո	
	Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ	• Ամերիաբանկում գործող հաշիվներով իրականացվող վերջին 6-12 ամիսների ամսական միջին շրջանառության մինչև 40%-ը, սակայն ոչ ավելի քան 20,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք այլ արտարժույթ • Առնվազն 3 ամիս Ամերիաբանկում շրջանառություն իրականացրած հաճախորդների համար սահմանաչափի որոշման հիմք է հանդիսանալու Ամերիաբանկում իր հաշվեհամարներով 3 ամիսների իրականացված գուտ շրջանառությունը և դրան նախորդող առնվազն 3-9 ամիսների այլ բանկերի հաշվամարներով իրականացված գուտ շրջանառությունը, սակայն ոչ ավելի քան 20,000,000 ՀՀ դրամ/ պայմանով, որ այլ բանկերում իրականացված շրջանառությունը տեղափոխվի Ամերիաբանկ				
	Ժամկետ (ամիս)	Մինչև 12 ամիս				
	Տարեկան տոկոսադրույք	ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի դեպքում վարկերը տրամադրվում են արտոնյալ ժամկետով: Արտոնյալ ժամկետի ընթացքում պարտավորությունը ամբողջությամբ չմարելու դեպքում, իսկ ՀՀ դրամով վարկերի դեպքում գումարի օգտագործման առաջին իսկ օրվանից օգտագործված գումարի նկատմամբ կիրառվում է հետևյալ տոկոսադրույքը`				
		19%		16%		14.5%
		ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի դեպքում արտոնյալ ժամանակահատվածին հաջորդող ամսվա ընթացքում պարտավորությունը ամբողջությամբ չմարելու դեպքում հաջորդ ամսից այդ պահին օգտագործած գումարի վրա հաշվարկվում է 20%:				
		Դրամական միջոցներով կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերով ապահովված վարկերի դեպքում տոկոսադրույքը սահմանվում է. - վարկի և գրավի նույն արժույթով լինելու դեպքում` գործող դրամական միջոցի/պարտատոմսի տոկոսադրույք + 4%, բայց ոչ ավելի քան վերոնշյալ տոկոսադրույքները, -վարկի և գրավի տարբեր արժույթով լինելու դեպքում` վերոնշյալ տոկոսադրույքները:				
		Հաճախորդի ցանկությամբ գույքի Ապահովագրությունը Բանկի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը ավելացվում է Բանկի կողմից սահմանված հետևյալ վերադրի չափով. անշարժ գույք` 0.2%, ավտոտրանսպորտային միջոց` 2.5%, հիմնական միջոց` 0.5%:				
		Վարկ / գրավ հարաբերակցության շեղմամբ պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.5%:				
		Հաշվի առնելով հաճախորդի վարկային պատմությունը կարող է սահմանվել ավելի բարձր տոկոսադրույք +0.5%:				
	Վարկի տրամադրման վճար	1% վարկի գումարից, նվազագույնը` 20,000 ՀՀ դրամ				
	Վարկի պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճար	Չի կիրառվում				

Քարտի պայմաններ	Քարտի թողարկում	Անվճար
	Քարտի տարեկան սպասարկում	10,000 ՀՀ դրամ, 3 ամսից ավել սպասարկվող հաճախորդների համար` անվճար
	Հավելյալ քարտի թողարկում	Անվճար
	Հավելյալ քարտի տարեկան սպասարկում	5,000 դրամ
	Քարտի վերաթողարկում (կորստի, վնասման հափշտակման, PIN-ի կորստի կամ երրորդ անձանց հայտնի դառնալու դեպքում)	5,000 դրամ
	Քարտի վերաթողարկում (քարտի ժամկետի լրացման դեպքում)	Անվճար
	Քարտի բլոկավորում	Անվճար
	Քարտի ապաբլոկավորում	Անվճար
	Կանխիկի տրամադրում	Չի թույլատրվում
	Մաքսային տերմինալներում անկանխիկ գործարքներ	Անվճար
	Այլ առևտրի կետերում անկանխիկ գործարքներ	3%
	Քաղվածքի տրամադրում կամ ուղարկում էլեկտրոնային փոստով	Անվճար
	Քարտի վարկային սահմանաչափի վերանայում	3,000 դրամ
	SMS հաղորդագրությունների ուղարկում	Անվճար
Վարկի մարման եղանակներ	Վճարման արտոնյալ ժամկետ	Գումարի օգտագործման ամսվա վերջին օր + 5 օր
	Մարման եղանակ առանց վճարման արտոնյալ ժամկետի	Վարկի մայր գումարը մարվում է ժամկետի վերջում: Տոկոսագումարները վճարվում են ամենամսյա պարբերականությամբ, ընդ որում, քարտային հաշվին յուրաքանչյուր մուտքի ժամանակ իրականացվում է այդ պահին հաշվարկված տոկոսների գանձում:
	Մարման եղանակ վճարման արտոնյալ ժամկետի դեպքում	Տոկոսների մարում ժամկետի վերջում, ընդ որում, քարտային հաշվին յուրաքանչյուր մուտքի ժամանակ իրականացվում է այդ պահին հաշվարկված տոկոսների գանձում: Վարկի մայր գումարի մարում ժամկետի վերջում:
Ապահովվածություն	Ապահովվածության նկարագրություն	1. Հաշիվների շրջանառություն 2. Առնվազն 1 ֆիզիկական և/կամ իրավաբանական բանկի համար ընդունելի անձի երաշխավորություն
	Վարկ/Գրավ հարաբերակցություն (որպես լրացուցիչ գրավի արժեք հիմք է ընդունվում լիկվիդային արժեքը)	1 Դրամական հոսքերի ամսական միջին զուտ շրջանառության մինչև 40% (Ընդ որում շրջանառության վերոնշյալ հարաբերակացությունը վարկի սպասարկման ընթացքում խախտելու դեպքում օվերդրաֆտի/վարկային գծի սահմանաչափը կարող է վերանայվել կամ հետ կանչվել) 2 Վարկային գծի սահմանաչափը կարող է գերազանցել միջին շրջանառության 40%-ը լրացուցիչ գրավի դեպքում, և այդ դեպքում օվերդրաֆտի/վարկային գծի գերազանցող մաս/լրացուցիչ գրավ հարաբերակցությունը հետևյալն է` 1. անշարժ գույք` 70%, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում` 80%, 2. տրանսպորտային միջոց` 50% 3. հիմնական միջոց` 40%, բայց ոչ ավելի, քան ընդհանուր գրավի մեջ 30%-ը 4. ոսկու առարկայագուրկ մետաղական հաշիվ Ամերիաբանկում` 80% 5. դրամական միջոց Ամերիաբանկում/ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր, որից. -նույն արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր` 90% -այլ արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր` 70%
	Լրացուցիչ պարտադիր ապահովում	Բիզնեսի հիմնադիրների/իրական շահառուների անձնական երաշխավորությունների տրամադրում
	Լրացուցիչ ապահովում	Որպես լրացուցիչ ապահովում` Բանկը կարող է պահանջել լրացուցիչ գրավ

Գրավադրվող գույքի ապահովագրություն		Գրավադրվող անշարժ գույքի ապահովագրությունը իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում, միայն այն դեպքում, եթե օգտագործվում/օգտագործվելու է ձեռնարկատիրական գործունեության նպատակով բանկի կողմից՝ վարկի մնացորդի/սահմանաչափի չափով
	Գույքի ապահովագրություն	Գրավադրվող տրանսպորտային և հիմնական միջոցների ապահովագրությունը իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում. 1. Հաճախորդի կողմից՝ առնվազն վարկի մնացորդի չափով 2. Բանկի կողմից՝ վարկի մնացորդի չափով/Ապահովագրության ենթակա չեն հետևյալ տրանսպորտային միջոցները. • Ավտոմեքենաներ, որոնք կրում են վտանգ սպառնող ապրանքներ՝ տոքսիկ նյութեր, քիմիկատներ, ռադիոակտիվ և պայթյունավտանգ նյութեր: • Ավտոմեքենաներ, որոնք կմասնակցեն մրցույթներին, փորձարկումներին կամ ունեն երեք անիվ, ձևեմաքրող մեքենաներ, մոտոցիկլետներ, հատուկ տեխնիկա հանդիսացող մեքենաներ • Տաքսի ծառայության և վարձով տրվող ավտոմեքենաներ/
Վարկի սպասարկման սակագներ*	Վարկի պայմանների փոփոխություն	25,000 ՀՀ դրամ
	Անշարժ գույք գրավի առարկայի փոփոխություն (այդ թվում գրավի սեփականատիրոջ փոփոխություն)	20,000 ՀՀ դրամ
	Տրանսպորտային միջոցի գրավի փոփոխություն (այդ թվում գրավի սեփականատիրոջ փոփոխության համար)	10,000 ՀՀ դրամ
	Գրավի առարկայի հետ կապված համաձայնությունների, թույլտվությունների/տեղեկանքների տրամադրում	10,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
	Վարկի մարման օրվա փոփոխություն	10,000 ՀՀ դրամ
Պահանջվող փաստաթղթեր	Պահանջվող փաստաթղթեր	Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր
		Վարկի հայտ-դիմում
		Անձնագրեր (բնօրինակը) /Ա/Զ-ի դեպքում/
		Հարկային կոդ, պետական ռեգիստրի վկայական (Իրավաբանական անձի դեպքում գործադիր մարմնի վերաբերյալ ներդիրը պարտադիր է)
		Կանոնադրություն (Իրավաբանական անձի դեպքում)
		Իրավաբանական անձի մասնակիցների, տնօրենի/նախագահի անձնագրերի և սոցիալական քարտերի պատճենները
		Նախնական հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր
		Վարկառուի և իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց կամ Ա/Զ-ների պետական գրանցման վկայականների և կից ներդիրների պատճենները
		Ֆինանսական հաշվետվությունները վերջին հաշվետու ժամանակահատվածի համար՝ հաստատված հարկային տեսչության կողմից
		Վերջին հաշվետու տարվա համար (հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ ներկայացնողների համար), վերջին հաշվետու եռամսյակի համար հաստատագրված և/կամ պարզեցված հարկ վճարողների համար
		Գործունեության իրականացման վայրի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենը
		Իրացման / մատակարարման պայմանագրեր, հայտ-պատվերներ, հաշիվ ապրանքագրեր, վաճառքների կանոնավոր գործընթաց հաստատող այլ փաստաթղթեր
		Գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզիաների, սերտիֆիկատների և պահանջվող այլ փաստաթղթերի պատճենները

		Երաշխավորների անձնագրեր, աշխատավայրից տեղեկանք եկամուտների վերաբերյալ և/կամ սեփականությունը հավաստող փաստաթուղթ
		Այլ բանկերում գործող հաշիվների շրջանառության քաղվածքներ
		Հարկային պետական ծառայությունից տեղեկանքներ պարտք ու պահանջի վերաբերյալ
		Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր.
		Իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը՝ բանկից վարկի և դրա ապահովման համար առաջարկվող ապահովման միջոցի վերաբերյալ գործարքներ կնքելու մասին
		Տեղեկանք գրանցված բաժնետերերի/մասնակիցների/հիմնադիրների, տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ (Իրավաբանական անձի դեպքում)
		Գործունեության հետ կապված ՀՀ օրենսդրական ակտերով և/կամ բանկի (ռիսկային բնապահպանական գործունեության դեպքում) կողմից պահանջվող բնապահպանական՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության, տեխնիկական անվտանգության և այլ փորձաքննարկան եզրակացություններ, ակտեր, տեխնիկատնտեսական հիմնավորումներ (ըստ անհրաժեշտության)
		Այլ փաստաթղթեր՝ Բանկի մասնագետի պահանջով
Այլ վճարներ	Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ	1. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվող միասնական տեղեկանքի համար սահմանված վճար, ՀՀ ՃՈ Տրանսպորտային միջոցի օտարման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի համար սահմանված վճար 2. Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի նոտարական վավերացման և Գրավի պայմանագրից ծագող Բանկի իրավունքի պետական գրանցման վճար իրավասու մարմնում, Տրանսպորտային միջոցի գրավի իրավունքի գրանցման վկայականի համար սահմանված վճար
	Վաղաժամկետ մարման միջնորդավճար	Չի կիրառվում
	Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: Տույժ՝ ժամկետանց Վարկի և տոկոսագումարի 0.13 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

*Սակագինը կիրառվում է հաճախորդի նախաձեռնությամբ փոփոխությունների իրականացման դեպքում: Եթե 1 փոփոխության արդյունքում գանձման ենթակա է մի քանի սակագին, ապա գանձվում է ամենաբարձր սակագինը՝ 1 անգամ: Սակագները կիրառելի չեն դրամական միջոցների, պարտատոմսերի, առարկայագուրկ մետաղական հաշիվների գրավով վարկերի համար: Եթե փոփոխությունների շրջանակներում իրականացվում է նոր գրավի ավելացում կամ երաշխավորի ավելացում, ապա սակագինը չի գանձվում: